

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է ներքին մրցույթ՝ Նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.1-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում զբանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.1-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.1-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են **Էլեկտրոնային տարբերակով՝**

Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ <https://cso.gov.am/> միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am/> կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին:

Ծանոթանալով Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղծի օգնությամբ ներկայացնել Էլեկտրոնային դիմում: Ստեղծելով «Դիմել» ստեղծը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր Էլեկտրոնային փոստի հասցե, գաղտ

նաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ»

զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ»,

«Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել լ հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել» կոճակը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.1-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող թեստավորման մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2

(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի»

«Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի»

«Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

ՀՀ քաղաքացիները թեստավորմանը ներկայանում են անձնագրով և/կամ նույնականացման քարտով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (զինվորական գրքույկ, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.1-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում.
- անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենը.
- դիպլոմ (ներ)ի լուսապատճեն (ներ)ը.
- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ (եր)ի լուսապատճեն (ներ)ը.
- արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի) լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայականի լուսապատճենը.
- մեկ լուսանկար՝ 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի մարտի 12-ի ժամը՝ 9:00-ից մինչև 2021 թվականի մարտի 18-ը՝ ժամը 24:00-ը: Դիմումներն ընդունվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 26-ին՝ ժամը 11:00-ին, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տերյան 89, հարկ 2-րդ, դահլիճ 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 5,6,14,34,180,181,182,183,184,185,186,189 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենք հոդվածներ՝ 3, 4, 5, 6, 8 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137110>
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 6, 8, 10, 11-16, 29, 33, 82, 95-98 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134780>

- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 5,9,13,15,22,23,26,27,29,42,45,86-88  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134776>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 30, 37  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>
- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 3, 5, 7,12  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137135>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,4,6,7,22,23,32.34,35  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
- ՀՀ կառավարության 08.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 667-Լ որոշում  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135345>
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» N 562-Ն որոշում.  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95807>
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի N 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1444-Ն որոշում  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127275>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- <<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- <<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)

- <<Խնդրի լուծում>> կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)

- <<Բարեվարքություն>> կոմպետենցիա հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/3.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-318, էլեկտրոնային փոստի հասցե՝ [nunekirakosyan@mail.ru](mailto:nunekirakosyan@mail.ru)):

**Հավելված N 6**

Հաստատված է

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2019թ. հոկտեմբերի 8-ի N 38-Լ հրամանի

**ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ**

## 1. Ընդհանուր դրույթներ

### 1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տարածքային կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տարածքային զարգացման պլանավորման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 22-33.1-Մ2-1)

### 1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

### 1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

### 1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

## 2. Պաշտոնի բնութագիր

### 2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային քաղաքականության հիմնադրույթների նախագծի մշակումը և իրագործումը.

2. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությանը վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության ստացումը Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմիններից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից.

3. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

4. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության մարզերի տարածքային զարգացման ռազմավարությունների իրականացման ամենամյա տարեկան աշխատանքային պլանի կազմումը և հաստատման ներկայացումը.

5. Իրականացնում է ՀՀ մարզերում առաջնային լուծում պահանջող խնդիրներին ուղղված ծրագրերի քննարկումը, հաստատման ներկայացումը և գործընթացի կազմակերպման աշխատանքների իրականացումը.

6. Իրականացնում է համայնքների վարչական տվյալների շտեմարանի վարման և ամբողջական շտեմարանի լիարժեք գործարկման աշխատանքները.

7. Իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացումը.

8. Իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված առաջարկությունների քննարկումը մարզպետարանների հետ և ամփոփում է արդյունքները.

9. Իրականացնում է պետական կառավարման համակարգի այլ մարմինների հետ մարզպետների աշխատանքների գործընթացի համակարգումը.

10. Իրականացնում է մարզպետների գործունեության գնահատման աշխատանքների

իրականացման գործընթացը.

11. Իրականացնում է Նախարարության պաշտոնական ինտերնետային էջի սպասարկման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

12. Իրականացնում է տարածքային կառավարման մարմիններից նրանց գործունեության առանձին ուղղությունների, ինչպես նաև տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ընթացիկ տեղեկատվության և հաշվետվությունների ստացման աշխատանքները.

13. Իրականացնում է տարածքային կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի մասին համապատասխան առաջարկությունների նախապատրաստման աշխատանքները.

14. Իրականացնում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկման աշխատանքները .

15. Իրականացնում է համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցություն.

16. Իրականացնում է տարածքային կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ տարեկան գործունեության և Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ ընթացիկ հաշվետվությունների մասին եզրակացության մշակման աշխատանքները .

17. Իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը:

#### **Իրավունքները՝**

- Փորձագիտական վերլուծությունների իրականացում, մարզերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության ստացում, ամփոփում և առաջարկությունների ներկայացում.
- Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմիններից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությանը վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության ստացում, ամփոփում և վերլուծում .
- ՀՀ կառավարությանը, վարչապետին մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության ստացում, վերլուծում և ամփոփում.
- մարզպետարանների հետ քննարկումների կազմակերպում, հանրապետական գործադիր մարմիններից համապատասխան տեղեկատվությունների հավաքագրում, վերլուծության իրականացում, ամփոփում և ամենամյա աշխատանքային պլանի կազմում .
- ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների բացահայտում, գույքագրում և ամփոփում .
- Համայնքների վարչական շտեմարան տվյալների հավաքագրման և մուտքագրման

համար դասընթացների կազմակերպում, համայնքներից տվյալների ստացում, ամփոփում և վարում .

- Հակակոռուպցիոն ծրագրից բխող աշխատանքների իրականացում, վերլուծում, տեղեկատվության հավաքագրում և ամփոփում .
- պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված առաջարկությունների քննարկում, վերլուծությունների իրականացում և ամփոփում մարզպետարանների հետ .
- պետական կառավարման համակարգի այլ մարմիններից ստացված առաջարկությունների քննարկում և ամփոփում .
- մարզպետների գործունեության գնահատման աշխատանքների իրականացման նպատակով կատարում է համապատասխան մարմիններից տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, ամփոփման և քննարկման աշխատանքներ .
- Նախարարության պաշտոնական ինտերնետային էջի սպասարկման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում .
- ընթացիկ հաշվետվությունների ամփոփում և եզրակացության մշակում .
- տարածքային կառավարման ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացում և ամփոփում .
- իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի հավաքագրում, քննարկում, ամփոփում և փորձաքննության ներկայացում .
- կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցություն, արդյունքների վերլուծում և ամփոփում .
- ընթացիկ հաշվետվությունների ամփոփում և եզրակացության մշակում .
- քաղաքացիներից ստացվող դիմում-բողոքների ուսումնասիրություն, քննարկման կազմակերպում, անհրաժեշտ տեղեկատվության ստացում և արդյունքների ամփոփում

#### **Պարտականությունները՝**

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությանը վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա համապատասխան առաջարկությունների փաթեթի մշակումը:
- ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող ամփոփ տեղեկատվությունը Կառավարությանը, վարչապետին ներկայացման ապահովումը:
- հանրապետական գործադիր մարմինների հետ քննարկման արդյունքների հիման վրա ՀՀ կառավարության կողմից սահմանված ժամկետում տարեկան գործունեության պլանի հաստատումը:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ



ներկայացումը:

- ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրված տվյալների ներբեռնում էլեկտրոնային ծրագրում՝ սահմանված ձևաչափին համապատասխան և գործարկման ապահովումը:
- սահմանված կարգով հաշվետվությունների ամփոփումը և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացումը:
- ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ստացված վերլուծությունների հիման վրա առաջարկությունների փաթեթների ձևավորումը և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացումը:
- վերլուծությունների հիման վրա առաջարկությունների փաթեթի ձևավորումը և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացումը:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով ՀՀ մարզպետների գործունեության գնահատումը և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացումը:
- Նախարարության պաշտոնական ինտերնետային էջում անհրաժեշտ տեղեկատվության տեղադրումը:
- ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ստացված հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա առաջարկությունների փաթեթների ձևավորումը:
- սահմանված կարգով համապատասխան իրավական ակտերի նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը, ինչպես նաև համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների փաթեթների ներկայացումը համապատասխան մարմիններին:
- սահմանված ժամկետներում իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ներկայացումը:
- վերլուծությունների հիման վրա համապատասխան առաջարկությունների փաթեթի մշակումը:
- հաշվետվությունների վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների փաթեթի մշակումը:
- քաղաքացիներից ստացվող դիմում-բողոքների պատասխանների ամփոփումը և համապատասխան պատասխան գրության ձևակերպումը:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները՝**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում կամ տնտեսագիտության բնագավառում կամ սոցիալական և (կամ) տնտեսական բնագավառում ուսումնասիրությունների, հետազոտությունների, մշտադիտարկումների և վերլուծությունների իրականացման կամ

ճարտարագիտության բնակավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

#### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

#### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

Կոնֆլիկտների կառավարում

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Ծառայությունների մատուցում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպական շրջանակ**

#### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման շրջանակներում:

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: